

Վիրահայոց Թեմում ավադույթի ուժ է ստացել հայաբնակ շրջաններ այցելելու և տեղի եկեղեցիներում հոգևոր-մշակութային միջոցառումներ անցկացնելու նախաձեռնությունը: Այս անգամ այցելության վայրը Մառնեուլի շրջանի Շահումյան ավանն էր:

Հունիսի 15-ին ուխտավորաբար Թբիլիսիից Շահումյան էր ժամանել Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը՝ ուղեկցությամբ Թեմի «Հայարտուն» կենտրոնի ստեղծագործական խմբերի: Հյուրերին դիմավորեցին տեղի հանրային դպրոցի տնօրեն Արտյուշ Ուրումյանը, Մառնեուլի շրջանային ժողովում Շահումյան գյուղից ընտրված էդիկ Գասպարյանը և ուրիշներ:

Առավոտյան Շահումյանի «Սուրբ Աստվածածին« եկեղեցում, որը կառուցվել է 19-րդ դարի առաջին կեսին, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մառնեուլիի շրջանի հայ համայնքների հոգևոր հովիվ Տեր Մովսես քահանա Աշուրյանը:

Հավարտ Պատարագի հավուր պատշաճի քարոզ խոսեց Թեմակալ Առաջնորդը: Սրբազան Հայրը համայնքի անդամներին հորդորեց շարունակել քրիստոնեական և ազգային ավանդությունների պահպանումը համայնքում: Անդրադառնալով օրվա խորհրդին նա նշեց, որ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցին հունիսի 15-ին նշում է Սբ. Գրիգոր Լուսավորչի
նշխարների
գյուտի
տոնը: Վիրահայոց Առաջնորդը հավատացյալներին բացատրեց, որ
Մայր
Աթոռ
Սբ
.
էջմիածնում
պահվող
Գրիգոր
Լուսավորչի
Սբ
.
Աջը
Հայ
եկեղեցու
կարեւորագույն
սրբություններից
մեկն
է
,
որով
օրհնվում
է
սրբազան
մյուռոնը և հայոց բոլոր եկեղեցիների նման այստեղ ևս տոնը արժևորվեց Սուրբ Պատարագով:

Եկեղեցական արարողությունից հետո եկեղեցու բակում տեղի ունեցավ մշակութային ձեռնարկ, որին մասնակցեցին Վիրահայոց Թեմի «Հայարտուն» կենտրոնի «Անի» պարային համույթը (պարուսույց՝ Անգելինա Նազարյան-Քոչյան) և անհատ կատարողներ: Համերգը վարեց կենտրոնի տնօրեն և մշակույթի բաժնի վարիչ Լևոն Չիդիլյանը: Տոնական մթնոլորտը թևածեց համայնքից ներս՝ մեծ ոգևորություն առաջացնելով գյուղի հասարակության շրջանում, որի համար Թբիլիսիից ժամանած հյուրերին գյուղի համայնքի և հասարակության անունից շնորհակալություն հայտնեց տեղի հանրային դպրոցի տնօրեն Արտյուշ Ուրումյանը:

Տոնախմբության ավարտին Թբիլիսիից ժամանած հյուրերը հյուրընկալվեցին գյուղի դպրոցում: Չնայած կիզիչ արևին և շոգ եղանակին, ուխտագնացությունն անջնջելի տպավորություն թողեց ինչպես գյուղի հասարակության, այնպես էլ Թբիլիսիից ժամանած հյուրերի վրա:





